

### 3. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

#### 3.1. Դրամավարկային հիմնական ցուցանիշներ

Ըստ ՀՀ կենտրոնական բանկի նախնական տվյալների, փողի բազան 2002թ. փետրվարի 28-ի դրությամբ կազմել է 72856 մլն. դրամ: Տարեսկզբի նկատմամբ այն նվազել է 7513.0 մլն. դրամով կամ 9.3 %-ով, իսկ հունվարի 31-ի նկատմամբ աճել՝ 1015.0 մլն. դրամով կամ 1.4%-ով:

Ըստ նախնական տվյալների, 2002թ. փետրվարի 28-ի դրությամբ փողի զանգվածը կազմել է 161554<sup>1</sup> մլն. դրամ և տարեսկզբի նկատմամբ նվազել՝ 10664 մլն. դրամով կամ 6.2%-ով, իսկ նախորդ ամսվա նկատմամբ համապատասխանաբար՝ 1406 մլն. դրամով կամ 0.9%-ով:

#### Փողի զանգվածի կազմը և կառուցվածքը ըստ ակտիվային բաղադրատարրերի

ամսվա վերջի դրությամբ

	2001թ.		2002թ.			
	դեկտեմբեր		հունվար		փետրվար	
	մլն. դրամ	%-ով փողի զանգվածի նկատմամբ	մլն. դրամ	%-ով փողի զանգվածի նկատմամբ	մլն. դրամ	%-ով փողի զանգվածի նկատմամբ
Զուտ արտաքին ակտիվներ, ընդամենը	76496	44.4	89584	55.0	82730	51.2
Զուտ ներքին ակտիվներ, ընդամենը	95722	55.6	73376	45.0	78824	48.8
<i>այդ թվում՝</i>						
Կառավարություն	8372	4.9	-2701	-1.7	3626	2.2
Հանրապետական կառավարություն	8466	4.9	-2582	-1.6	3740	2.3
ՀՀ պետական սոցապ հիմնադրամ	-36	0.0	-8	0.0	-9	0.0
Տեղական ինքնակառավարման մարմիններ	-58	0.0	-111	-0.1	-105	-0.1
Տնտեսություն	102669	59.6	83303	51.1	85526	52.9
Կազմակերպություններ	62804	36.5	57761	35.4	58796	36.4
Տնտեսության այլ ճյուղեր	39865	23.1	25542	15.7	26730	16.5
Զուտ այլ ակտիվներ	-15319	-8.9	-7226	-4.4	-10328	-6.3

#### Փողի զանգվածի կազմը և կառուցվածքը ըստ պասիվային բաղադրատարրերի


ամսվա վերջի դրությամբ

	2001թ.		2002թ.			
	դեկտեմբեր		հունվար		փետրվար	
	մլն. դրամ	%-ով փողի զանգվածի նկատմամբ	մլն. դրամ	%-ով փողի զանգվածի նկատմամբ	մլն. դրամ	%-ով փողի զանգվածի նկատմամբ
<b>Փողի զանգված, ընդամենը</b>	172218	100	162960	100	161554	100
%-ով նախորդ ամսվա նկատմամբ	103.0	x	94.6	x	99.1	x
<i>այդ թվում՝</i>						
Բանկային համակարգից դուրս կանխիկ դրամ	65027	37.7	55831	34.2	57769	35.8
%-ով նախորդ ամսվա նկատմամբ	110.0	x	85.9	x	103.5	x
Ցպահանջ ավանդներ	13581	7.9	13485	8.3	13826	8.5
%-ով նախորդ ամսվա նկատմամբ	96.6	x	99.3	x	102.5	x
Ժանկետային, խնայողական ավանդներ	6674	3.9	7812	4.8	8019	5.0
%-ով նախորդ ամսվա նկատմամբ	97.8	x	117.1	x	102.6	x
Արտարժույթով ավանդներ	86936	50.5	85832	52.7	81940	50.7
%-ով նախորդ ամսվա նկատմամբ	99.6	x	98.7	x	95.5	x
<b>Դրամական բազմարկիչ</b>	2.2	x	2.21	x	2.19	x

<sup>1</sup> Ընդգրկում է հաշվարկված տոկոսները:

**Փողի զանգվածի տարրերի դինամիկան 2002թ. հունվար-փետրվարին**

մլն. դրամ



**Ֆինանսական շուկայի տոկոսադրույքները**

	2001 ր. րեկտեմբեր	2002 ր. հունվար	2002 ր. փետրվար
Առևտրային բանկերի գործառնությունների տոկոսադրույքները			
վարկեր <sup>1</sup>	27.36	26.55	20.87
ավանդներ <sup>1</sup>	13.52	12.01	12.29
ՀՀ Կենտրոնական բանկի ռեպո գործառնությունների տոկոսադրույքը	15.0	14.0	13.5

**Առևտրային բանկերի վարկային ներդրումները տնտեսությամբ**

մլն. դրամ

	2002 ր.	
	հունվար	փետրվար
<b>Վարկային ներդրումներ, ընդամենը</b>	60613	63343
որից՝ տարադրամով	47922	51221
այդ թվում.		
կարճաժամկետ	27632	28041
%-ով ընդամենը վարկային ներդրումների նկատմամբ	45.6	44.3
որից՝ տարադրամով	22882	23684
%-ով տարադրամով վարկերի նկատմամբ	47.7	46.2
երկարաժամկետ	32981	35302
%-ով ընդամենը վարկային ներդրումների նկատմամբ	54.4	55.7
որից՝ տարադրամով	25040	27537
%-ով տարադրամով վարկերի նկատմամբ	52.3	53.8

<sup>1</sup> Հաշվարկված է 15 օրից մինչև մեկ տարի ժամկետով միայն դրամով տրամադրված վարկերի և ներգրավված ավանդների համար (առանց միջբանկային շուկայի):

2002թ. փետրվարի 28-ի դրությամբ երկարաձգված և ժամկետանց վարկերը կազմել են համապատասխանաբար՝ 7638 մլն. և 5674 մլն. դրամ: 2002թ. հունվարի 31-ի նկատմամբ երկարաձգված վարկերն նվազել են 1298 մլն. դրամով կամ 14.5%-ով, իսկ ժամկետանցն աճել՝ 696 մլն. դրամով կամ 14.0%-ով:

Բանկերում բնակչությունից ներգրավված ավանդների մնացորդը 2001թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ նվազել է 417 մլն. դրամով կամ 0.8%-ով և 2002թ. փետրվարի 28-ի դրությամբ կազմել՝ 54290 մլն. դրամ:

Բանկային համակարգում սպասարկվող հաճախորդների քանակը 2002թ. փետրվարի վերջի դրությամբ ըստ նախնական տվյալների կազմել է 326839 որից ֆիզիկական անձինք՝ 291987, իսկ նրանց հաշիվների քանակը՝ համապատասխանաբար 347044 և 299277: Ընդ որում, ներառված չեն միացյալ հաշիվներում ընդգրկված հաճախորդները և նրանց հաշիվների քանակը:

2002թ. հունվար-փետրվարին ՀՀ բանկային համակարգում դրամարկղային շրջանառության մուտքերը կազմել են 60844.0 մլն. դրամ (փետրվարին՝ 30092.2 մլն. դրամ), իսկ ծախսերը՝ 54502.4 մլն. դրամ (փետրվարին՝ 32419.8 մլն. դրամ): Մուտքերը գերազանցել են ծախսերի գումարը 6341.6 մլն. դրամով (փետրվարին՝ ծախսերը գերազանցել են մուտքերի գումարը 2327.6 մլն. դրամով): Արտարժույթի վաճառքից մուտքերը 2002թ. հունվար-փետրվարին կազմել են 20287.5 մլն. դրամ (փետրվարին՝ 10108.7 մլն. դրամ), իսկ արտարժույթ գնելու համար ծախսերը՝ 20417.9 մլն. դրամ (փետրվարին՝ 11395.3 մլն. դրամ): Արտարժույթ գնելու համար ծախսերի գումարը գերազանցել է արտարժույթի վաճառքից մուտքերը 130.4 մլն. դրամով (փետրվարին՝ 1286.6 մլն. դրամով):